ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի առաատար խորհրդատուն՝

- Իրականացնում է Արդարադատության նախարարի և ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանների համաձայն կատարողական վարույթներով ընթացիկ գործունեության տեսչական ստուգումը և ծառայողական քննությունների անցկացումը.
- Իրականացնում է կատարողական գործողությունների ընթացքում տարածքային բաժինների կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ներկայացված զեկուցագրերի կամ Բաժին ներկայացված գրությունների հիմքով որոշակի կատարողական վարույթների ուսումնասիրությունը.
- Իրականացնում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների և այլ գրությունների պատասխան գրությունների պատրաստումը.
- Ապահովում է Ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող կատարողական գործողությունների օրինականության նկատմամբ հսկողության գործընթացը.
- Մասնակցում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանության մշակմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան.
- Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ.

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության տեսչական և վերլուծական բաժնի առաջատար խորհրդատուի պաշտոնում նշանակվելու համար աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում:

Պաշտոնին նշանակվելու համար մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի N 461-Ն որոշմամբ: